№ 227 Դեկտեմբերի 27 **1879** Դեկտեմբերի 27 № 227

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ“
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
1880 թվին

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ԱՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօների հետևեալ օրերից։

Լրագրի դիրքը և պրոգրամմեն նոյն են մնում։ Մենք ստանում ենք ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ «ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլ է, կէս տարվան 6 ռուբլ։ Գրվել կարելի է ՄԻԱՅՆ ԽՄԲԱԳՐԱՏՆ մէջ։

ԸՌՈՒՆՁԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատը։

Օտար քաղաքներից պէտք է դիմել հետևեալ հասցէով ТИФЛИСЪ Редакція «Мшакъ.

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին տեսութիւն։ Մեր պիտոյքները և մեր կուլտուրան։ Նամակ Նոր-Նախիջևանից։ Նամակ Մեղրիից։ Նամակ Ախալքալաքից։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Ֆրանսիա։ Թուրքիա։ Նամակ Թուրքիայից։—Յայտարարութիւններ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ՊԻՏՈՅՔՆԵՐԸ ԵՒ ՄԵՐ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ

—

Այն օրից երբ մենք միջոց ենք ստացել ազատ և խաղաղ կերպով զարգանալու թէ մտաւորապէս, և թէ տնտեսապէս մեր պիտոյքները օրից օր աճել շատացել են. քիչ առաջ մեր հայրերը և պապերը իրանց բազմաչարչար մարմինները ծածկում էին կոպիտ բեզով, ղադաքով և բրթէ շալերով, հիմա մենք բաւականանում ենք բատիստով, մետաքսով և նուրբ մահուտներով, բայց մեր մեծապահանջ պիտոյքների հետ զուգընթաց չէ շատացել մեր գիտութիւնը, մեր կուլտուրան առաջ չէ գնացել։ Երևում է որ մենք մեր պապերից շատ առաջ չենք գնացել, նրանց պահանջները գոնէ շատ համեստ են եղել, իսկ մենք զուրկ նրանց համեստութիւնից, չունենք ուսում, գիտութիւն որ կարողանանք մեր պիտոյքները և պահանջները բաւականացնել։ Արևմտեան Եւրոպայում միջին դասը—բուրժուազիան ստեղծել է այն բարձր քաղաքակրթութիւնը, որով պարծենում է այժմ մարդկութիւնը. բուրժուազիան վերականգնել է մարդկային ոսկեակոխ արած իրաւունքները, նա ազատել է մարդուն բռնաւորութիւնից և ստրկութիւնից։ Մեր միջին դասը, 'ի հարկէ, շատ հեռու է այսպիսի բարձր և դժուար խնդիրներից, նրա բոլոր գործունէութիւնն է վերափոխել դէպի մեր երկիրը ուրիշների արդիւնագործութեան բերքերը, բոլորովին անտարբեր նայելով մեր երկրի բնական բերքերի մշակութեան։ Եթէ կայ մի որ և իցէ արդիւնագործութիւն, որը նահապետական ձևերով կատարվում է, մեր վաճառականը իր կապիտալով վազում է այնտեղ, հէնց որ մի անբախտութիւն է պատահում արդիւնագործութեան հետ, նա մնում է գլխին թակելով. նա չէ կարողանում միջոցներ հնարել դժուարութիւնից դուրս գալու համար, նա չէ կարողանում ուսումնասիրել արդիւնագործութիւնը, նրա զարգացման և անկման պատճառները։ Մեր վաճառականը զուրկ է սեպհական ինիցիատիվից, նա չը գիտէ հարստանալու ճշմարիտ ճանապարհները, նրա տնտեսութիւնը շատ նման է ձուից բուրթ կըրտելուն, ինչպէս ասում է ժողովուրդը, որովհետև նա աշխատում է ձեռք բերել հարստութիւն այնտեղ, որտեղ ամենից դժուար է և որտեղ պէտք է գործ դնել ամենաանբարոյական միջոցներ։ Ճշմարիտ հարստութիւնը երկրի և նրա բնական բերքերի մէջ է կայանում, ժողովուրդը այն ժամանակ է հարուստ, երբ կարողանում է իր բազմակողմանի պիտոյքները ուրիշներից անկախ իր սեպհական միջոցներով բաւնել երբ կարողանում է շրջապատող բնութեան ուժերը իր օգտին ծառայեցնել։

Եթէ կարելի է այսպէս ասել, մենք քաղաքակրթութեան վերացական մասն ենք միայն սեպհականացրել մեզ, չիմանալով նրա իրական, բէալական մասը։ Ճաշակներս նրբացել է, սովորել ենք կեանքի փափուկ եղանակներ, բայց ստեղծագործական և արդիւնագործական ուժերս չենք զարգացրել։ Շեկսպիրի գրուածքները թարգմանում ենք, բայց Ուատտի շոգին դեռ չէ թնդել մեր երկրի խորքերում. մեր ուսումնարանը սովորեցնում է միայն գրագիտութիւն, նա չէ կարողանում տալ մեզ տեխնիկական կրթութիւն. այսպէս մեզանից դուրս են գալիս դատարկ գլուխներ և ոչ մտաւորական և արդիւնաբերող ուժեր։ Բ. քաղաքի ծխական դպրոցը ըստեղծեց մի քանի տգէտ գրագիրներ, իսկ մի և նոյն քաղաքի մեքենայագործական և տակառագործական գործարանը մի քանի տասնեակ հայ արհեստաւորներ պատրաստեց, որոնք կազմում են ժողովրդի տնտեսական ուժ։ Տեխնիկական և գիւղատնտեսական կրթութիւնը պէտք է կազմէ ժողովրդական կրթութեան հիմքը, իսկ միւս կողմից բարձր ուսում ստացող երիտասարդութիւնը հարստացած արհեստներով և գիտութիւններով պէտք է թափանցէ ժողովրդի մէջ, և այսպէս պէտք է ստեղծվի մեր սեպհական կուլտուրան, այնուհետև մեր ապագան ապահովված է։ Երբ ուզում ենք ապացուցանել օտարներին, որ մենք քաղաքակրթվելու շնորհ ունենք, շուտ ցոյց ենք տալիս մեր անցեալ պատմութեան վրա, Անիի աւերակներով մեր անցեալ կուլտուրան ենք չափում. թագաւորների պալատները միշտ փառաւոր են եղել, բայց բանը նրանցում չէ. հարկաւոր է նայել ներկայ իրականութեան վրա, հարկաւոր է մտածել հայ գիւղացու զետնի հետ հաւասարված խոնաւ խրճթի փառաւորութեան մասին, հարկաւոր է մեր սառած կուլտուրան յառաջ մղել ներկայ գիտութեան կանոններով, որպէս զի նա կարողանայ մեր բազմաթիւ պահանջները և պիտոյքները լրացնել։

Մոսկվա. Ն. Աբէլեանց

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

—

3 դեկտեմբերի

Եթէ մեր քլուպը լիներ մի քանի քաղաքների քլուպների նման՝ կամ օրէնքով թոյլ տրուած թղթախաղարան (игорный домъ), կամ աղնուացրած արբեանոց՝ (питейное заведеніе) ես ոչինչ չէի ասի, այնպէս ինչպէս որ Երևանի և Հին-Նախիջևանի անդամները ոչինչ չեն ասում իրանց քլուպների մասին. բայց մեր քլուպը այնպէս չէ, կամ գոնէ այնպէս չը պիտի լինի. մեր քլուպի մէջ կան առհաւատչեաներ առաւել բարձր կանգնելու, քան որքան մի քանիսը աշխատում են նորան կանգնեցնելու։ Այս նորումս մեր քլուպի մէջէն անպակաս են կռիւ, աղմուկ (շամաթա). իրար սիրտ ցաւցնել, իրար յիշոցներ (քիւֆիւր) տալ և մինչև անգամ գաւազանահարութիւն (палочные удары)։ Մեր քլուպի անդամների մէջ մտել է երկպառակութիւն։ Մեր քլուպը ճգնաժամի մէջ է, որից երկու հետևանք կարող է դուրս գալ՝ կամ նա կը մեռնի, կամ երիտասարդական նոր ոյժ և նոր կեանք կը ստանայ։ Մեր քլուպը բաժանված է երկու կուսակցութեան (партія)՝ մինը ծերերու և միւսը երիտասարդներու *)։ Մինը նոցանից տեսնում է քլուպի մէջ ժամանակի սպանման, թղթախաղի, գինեճանութեան, որկորաժէտութեան, մարդուս վայրագ բնազդները (инстинкти) դուրս հանելու և... և... և իր թաքուն անձնական խորհուրդները առաջ տանելու միջոց. իսկ միւս կուսակցութիւնը ցանկանում է քլուպի մէջ տեսնել քաղաքիս բարենորոգման խնդիրները նախապէս մշակելու, քաղաքացւոց պիտոյքի մասին մտածելու, քաղաքիս գործունեաների ընթացքին ի մօտոյ ծանօթանալու և նոցա իր արդար քննութեան տակ ձգելու ասպարէզ։

Այս երկու կուսակցութիւնները, ունենալով իրարէ տարբեր ձգտումներ, անչուշտ մի օր պիտի բաղխուէին իրանց հակառակ կարծիքներովը և պիտի պատերազմէին։ Որ և եղաւ իսկ։

Բան հասկացողները գիտէին ինչ են ուզում. իսկ բազմութիւնը որ միշտ տարրապէս, (стихійно) է առաջ գնում, պատահաբար և առանց գիտակցութեանը յարեցաւ այս կամ այն կողմը. և որովհետև ծերերի կուսակցութիւնը աւելի էր խոստանում զգայական վայելչութեան (чувственное наслажденіе)—օրնիբուն թուղթ խաղալէն, պատուաւոր մարդոց մէջ անպատիժ գինեճանութիւն անելէն, առանց արգելքի խելքին ու հագդին (պ օ ղ ա ղ) զօր տալէն աւելի լաւ ինչ բան կայ մի կոպիտ բնազդմամբ մարդու համար,—և այդ պատճառաւ նա շատ հետևողներ ունեցաւ։

Մեր քաղաքի քլուպի վերատեսուչ լինելը նշանակում է՝ բոլոր այդ ժողովի ուղղութեան տէր դառնալ. իսկ վերատեսուչների վրա ազդեցութիւն (вліяніе) ունենալը նշանակում է՝ բոլոր քաղաքի աներևոյթ տեսփօթը լինել և բոլոր քաղաքացիներու վիճակը իր ձեռքումը ունենալ։ Այսպիսի չլացուցիչ փառքի և այսպիսի հզօր ազդեցութիւնը ձեռքէն բաց չը թողնելու համար, ինչն իրան հասկացվում է, կարժէր պատերազմել, և այդ մանաւանդ այնպիսի վախկոտ և վիզը-ճուկ մարդոց հետ, ինչպէս որ նախիջևանցիքս ենք։

Ասել եմ և կասեմ, որ հին երկպառակութիւնը *), որոյ չարժառիթների մեռնելովը և ինքը մեռել էր և քաղաքս հանգստացել էր, մեր օրերումը դարձեալ բարձրացնում է իւր գլուխը։ Ինչպէս 15—20 տարի առաջ, այնպէս և մեր օրերը, գտնուեցան մարդիկ, որոնք ժողովրդի ազատութիւնը աւանդաբար և ժառանգաբար կամենում են բռնաբարել։ Անկուշտ փառասիրութիւն, մեծամեծ օգուտներ խոստմունք պարզամիտ ժողովրդին, բամբասանք բարեմիտ մարդոց վրա, թաքուն հալածանք, ամբոխի կեղտոտ կիրքերը շարժելը, անարժան մարդոց առաջ քաշելը՝ իւր կուսակիցներու թիւը շատցնելու խորհրդով, և անթիւ անհամար նուրբ ու խորամանկ հնարներու գործադրութիւնը—այս ամենը կրկնվում է առաջուայ պէս։ Գիտցողը առաջուանէ գիտէ, թէ յաղթութիւնը դէպի ո՞ր կողմը պիտի հակի։

Պարոններ, քանի որ ուշ չէ՝ կանգ առէք. մոռածեցէք ձեր անելիքը. բայց ամենէն աւելի՝ զգուշացէք մի քանի փառասէրների ձեռքումը կեղտոտ գործիք դառնալէ։ Ինքներդ էլ արդէն պարզ տեսնում էք, որ քանի մի տեսփօթի ձեռք դուք խաղալիկ էք դարձել։ Ժամանակ չէ՞ խելքերս գլուխներս ժողովելու։

Գտնուեցան մի քանի մարդիկ, որ չիտակ ասացին տեսփօթներին. եղբայրներ, մեր դարը ստրուկների ազատութեան դար է. մենք ինչ կարօտութիւն ունենք ազատ բերաններիս սանձ (լիւկէն) դնել և այդ սանձի ծայրը ձեր ձեռքը տալ։ Տեսփօթները չը հաւանեցան այս խօսքին և սկսան իրանց ընկերների և անդամների բազմութեան մէջ սուտ ձայն տարածել թէ՝ «Լհա՛ ահա, գտնուել են մի քանիսը, որք կամենում են քանդել մեր քլուպը։ Միամիտ ժողովուրդը, ինչպէս յայտնի է, միշտ նայում է բանի արտաքինի վրա, նա գործ չունի նրա ներքին խորհրդի հետ. թեթևամիտ ժողովուրդը հաւատաց տեսփօթների և նոցա արբանեակների խօսքին և ասաց «Զուզեմ ազատ կեանք, թող մնամ ետիր»։

Ահա այս է մեր քլուպի անդամներու երկպառակութեան (раздоръ) միակ և իսկական պատճառը, ուրիշը մի փնտռէք։

Երիտասարդների պահանջը այս է.

1) Մեզ պէտք չեն վերատեսչի (директоръ, старшина) անունով տեսփօթներ։

2) Թող նոր վերատեսուչներ ընտրուին։

3) Թող քլուպի պատուաւոր տեղը չը պատկանի միայն թուղթ խաղացողներին և գինեճանութիւն անողներին, և այլ լրագիր և օրագիր կարդացողներին և հանգիստ ու խոհեմ խօսողներին։

4) Թող վերնայ քլուպի մէջէն լրտեսները՝ զանազան ծառայողների անունի տակ։

5) Թող քլուպի համար օրինաւոր խոհարար (поваръ) վարձուի։

(*) Ծեր ու երիտասարդ (կ է ն ճ) ասելով, ես ոչ սպիտակ և ոչ սև մազ եմ հասկանում. շատ սև մազով մարդիկ կան, որք քանց ծերերը աւելի թոյլ և մաշուած հոգի ունին. կան և, ընդհակառակն, այնպէս ալէզարդ մարդիկ, որք քանց երիտասարդները աւելի աշխոյժ, կեանք և ոյժ ունին հոգիներու մէջ։

(*) Հայրապետեանց և Խալիպեանց կռիւը։

6) Թող անդամները չուտեցնեն պիֆթէքի, քօթլէթի, կռուտինքայի և ռօսթպիֆի տեղ «կօչիկի տապան»։

7) Թող մի բաժակ թէյն արժէ 5 և ոչ թէ տասը կօպէկ։

8) Թող ծառաները ծուռ. ու մուռ. հնարներով չաշխատեն փող սկրդելու անդամներէն։

9) Քաղաքիս մէջ ծանրակշիռ պաշտօն ունեցողները այսուհետև վերատեսուչ չընտրուին, որպէս զի քլուպը կարողանայ լինել ոչ լոկ նոցա ազատօրէն ժողովուելու տեղ, և որպէս զի բարոյական ճնշումը բոլորովին վերանայ միւս անդամների վրաներէն։

10) Թող միւս անդամ չը լսուի քաղաքիս մէջ այսպիսի գանգատ «Կեանքիս մէջ միայն մի անգամ ազատօրէն կարծիք յայտնեցի և դորա համար չարաչար տուժուեցայ (ճերէմէ տուի) 75 ռուբլի։» (*)

Ամոթ և խայտառակութիւն։ Այսպիսի խօսքը պատիւ չի բերում մեր լուսաւորեալ XIX դարուն։

Ինչպէս տեսնում էք, այս թղթակցութիւնս ես շատ համեստ սահմաններով արի. ես չատացայ թեթև ակնարկութիւններով. ես վարագուրի միայն մի ծայրը և այն շատ քիչ բացի. բայց եթէ հարկը պահանջէ և ինձ ստիպեն, ես պատրաստ եմ վարագոյրը բոլորովին բարձրացնել և այն ժամանակ 5 միլիոնեայ ազգը կը տեսնէ շատ ուրիշ բաներ, որ պատիւ չի բերիլ բան հասկացողներին։

Սիլվիկ

ՆԱՄԱԿ ՄԵՂՐԻՑ

—

30 Նոյեմբերի

Մեղրի գիւղը, անցեալ 1867 թուին, դիւանական բաժանմունքով Օրդուբադի գաւառից կտրվեց և յանձնվեց Զանգեզուրին։ Մեղրիից մինչև Օրդուբադ է 28, իսկ Զանգեզուր 210 վերստ, և մի և նոյն ժամանակ երկուսի ճանապարհներն էլ լեռնոտ ու դժուարագնաց են։ Որովհետև Օրդուբադին մօտիկ ենք, այժմ էլ նոյն տեղի փոստայի հետ յարաբերութիւն ունենք, այնտեղից ենք գնում մեր մթերքն ու այնտեղ կամ Ագուլիս վաճառահանում մեր ապրանքն, մին խօսքով, որ Օրդուբադը իրաք Մեղրիի աղամանն էր, ուստի մեր մէջ մի հարց առաջարկվեց՝ Մեղրին մասամբ կապել մեր գաւառական քաղաքի հետ—Օրդուբադի հետ. այսինքն ճանապարհը այնպէս չինել, որ բարձած դրաստը անվտանգ անց ու դարձ անի։ Բայց Զանգեզուրին յանձնվելէն յետոյ նոյն խնդիրը կատարեալ մեռաւ և այն օրից Մեղրին իր կարողութենից դուրս վնասվեց հետևեալ բաներումն. նախ՝ մեղրեցին առաջ մի օտարութիւն գնացողի անցագիր բերելուն քրէէ կը տար մի ռուբլի, այժմ վճարում է վեց ռուբլի. միջին թւով Մեղրին ունի օտարական հարիւր մարդ, ուրեմն և վճարում է զուտ քրէէ 600 ռուբլի։ Երկրորդ՝ առաջ որ մեղրեցին կը հրաւիրվէր դիւանական գործով, նա կը տանէր իր վաճառահանելի ապրանքը Օրդուբադ, նոյն օրը դատարանին էլ կը ներկայանար, ապրանքն էլ կը վաճառէր և միւս օրը գնելով իր պիտոյքը շատ ճանապարհորդների հետ կը դառնար տուն անվտանգ, մինչդեռ այժմ գանգատաւորը, պատասխանատուն և վկան Զանգեզուրի ճանապարհի երկարութեան պատճառաւ որ շատ դրաստ չէ կարողանում ճանապարհ կտրել, կամ Գէազրեզ, Գիւմօրանց և Դիրաքլու լեռների երբեմն մեծաքանակ ձիւնից կապ լինելուն համար կամ Գէազրեզ, Գիւմօրանց և Դիրաքլու լեռների երբեմն մեծաքանակ ձիւնից կապ լինելուն համար Նշանակեալ ժամին չը ներկայանալով դատարանին, կորցնում են իրաւունքը և չարաչար վնասվում։ Երրորդ՝ մենք Զանգեզուրին յանձնվելէն յետոյ երեք անգամ գաւառապետների հրամաններով մասնակցել ենք Շուշի-Զանգեզուրեան փոստի ճանապարհի չինելուն և մխսել ենք 4000 ռուբլ. անտարակոյս եթէ մեղրեցիք հետեէին և իրաւունք ստանային այդ ծախսը Մեղրի-Օրդուբադեան ճանապարհի վրա անելու, անկասկած այժմ փոստի ճանապարհ կունենային և բեռնակրութեան վարձը երկապատիկ էժան կը նստէր։ Չորրորդ՝ Օրդուբադից եկած եաուլները մեզ հետ կը վարվէին, ինչպէս վայելն է, իսկ Զանգեզուրից եկող մի «մայամ տվայամ» արտասանող ծառայողի մօտը դնալ չէ լինում. խեղճ ժողովուրդը ամեն բանով մեղաւոր է մեր այս հերոսների մօտ. «քեռիվէն տես, գիւղը կողոպտիր», տանուտէրի բերանի պողպատը հանում, եաուլներին հրամայում են հինգբար վարվել,—գլխին ծեծելով գցում են առաջները գիւղից ուտելիք հաւաքելու, մէկին ծեծում են, միւսին հայհոյում, անպատուում իր ընտանիքի մօտ, և հարկաւոր դէպքում հաւատին դիպչելով ասում «երկու օր է ուրիշ տեղ ոչինչ չեմ կերել, հիմա ինձ մի հաց, ութ ձու, երեք հաց ու մի ափսէ փլավը ինչ չինէ։» Իսկ մեղրեցին, այս անմռունչ արարածը, պատրաստ է մի քանի ռուբլի վնասվել, միայն Նրան չը ծեծեն, չը հայհոյեն իրան ու հաւատին, բայց բարբարոս եաուլը ամենն էլ անում է ու միայն տանուտէրից չնորհակալ հեռանում։

Թէ այսքան ժամանակամիջոցին Մեղրին այս անտանելի նեղութիւնների կրելումն ինչ արեց, կասեմ ոչինչ. դիցուք մի քանի անգամ խնդիրներ ներկայացրեց իշխանութեան իր շրջակայ 20 գիւղօրայքովը, որոց մէջ կան հայ և Թուրք 6—7000 բնակիչ, էլի յետ յանձնվելու Օրդուբադին, բայց մինչև օրս ոչինչ բաւականութիւն չէ ստացել, որովհետև խնդիրները մի այնպիսի փորձառու մարդու չը գրել տվեց, որ առաջարկէր օրինաւոր քարտէզ ապացուցանելու Մեղրի-Օրդուբադեան և և Մեղրի-Զանգեզուրեան ճանապարհների անհամեմատ տարբերութիւնը, Գէազրէլ, Գիւմօրանց և Դիրաքլու սարերի ձմերան երբեմն անանց լինելը և հարիւրաւոր պատճառներ, որով հասնէր իր նպատակին բարեխնամ իշխանութեան կարգադրութեամբ։

Դեռ այդ չէ բոլորը։ Ներկայ տարին որ մթերքի թանգութեան պատճառով Մեղրին սով է ընկել, ուր որ այրին, աղքատը և՝ որբը ապրուստի ոչ մի միջոց չունեն և միայն Աստուծոյ են յուսացել, դեռ լսում ենք, թէ մեր պ. գաւառապետը կարգադրել է որ էլի մեղրեցիներին տանեն բանեցնելու Շուշի—Զանգեզուրեան և Նախիջևանեան ճանապարհների վրա. մեղրեցին մի բուռը ցորեն ցանելու տեղ չունի և ստիպված է արիւն քրտինքով աշխատած կօպէկներով ցորենի պուդին 2 ռուբլ 60 կօպէկ վճարել, բայց էլի ցորեն չը գտնել։ Պ. Կարոեվը, որը, մեր գաւառի առաջին քաղաքակիրթ և բարեխիղճ գաւառապետն է, յուսամ թէ տեղեկանալով մեր ժողովրդեան անտանելի դրութիւնը, կը խնայի և կազատի մեզ այս ծանր լուծից, կամ գէթ կը թոյլատրի որ այդպիսի աշխատանքը կամաց-կամաց գործադրվի Մեղրի Օրդուբադ դեան ճանապարհի վրա, որի չը շինվելու միակ պատճառը մեզ Զանգեզուրին յանձնելն է։

Ցաւանի բան է, որ այսպիսի կենսական խնդիրը պատկանում է ժողովրդեան առաջաւոր դասին,—տանուտէրին, շինական դատաւորներին և ունևորներին, որոնք պէտք է հոգ տանէին, բայց թէ ինչ է պատճառը կամ թէ նրանք ինչով են զբաղված, որ մինչև օրս մնացել է առանց հետևանաց, մինչդեռ ժողովուրդը անընդհատ վնասվում է, այդ, կարծեմ, խոհեմ ընթերցողը առանց երկար մտածելու կը հասկանայ։

Պ. խմբագիր, թէպէտ «Մշակի» պարտաւորութիւնը չէ այսպիսի բանի համար հոգալը, սակայն ես լիայոյս եմ թէ տեղեկանալով մեր ժողովրդեան վիճակին, անկարելի չէ՛ք մնայ օգնելու, կը բարեհաճէք նամակիս մի անկիւն չնորհելու, որի միջոցաւ անտարակոյս մեր խնդիրները կը կենդանանան և ուշադրութեան կարժանանան. լրագրութեանդ համարմունքը արժանաւոր կերպիւ մեծ է, գոնէ մեր հասարակութիւնը կարթնանայ և կը շտապի հոգալ այս ցաւին համար։

* * *

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

—

22 դեկտեմբերի

Մեր գաւառապետի գնալից ետքը նրա օգնականը, պ. Հաղարապետեան, առանձին հրամանագրերով ամսիս 12-ին կարգադրած է, որ իւրաքանչիւր կիրակի երկ-երկու չինական հասարակութիւններ, հրամանագրի մէջ յիշված կարգով, բերեն քաղաք ծախելու՝ ալիւր, ցորեան և այլ ուտելեղէններ։ Դրա կատարման համար չինական տանուտէրը պարտաւոր է նշանակել մի ի ս զ բ ա շ ի (староста) իբրև հսկող։ Կունենայ արդեօք այդ կարգադրութիւնը որ և իցէ օգուտ և արդեօք կը գործադրվի, դա ցոյց կը տայ մօտիկ ապագան։

Երկու օր առաջ հաւաքվեցան քաղաքիս մի քանի ունևոր անձինք, որպէս զի իրանց միջից փոխ դեր հաւաքեն, հաց գնեն և էժան գնով ծախեն խեղճերի վրա։ Բայց ափսոս որ նրանց խօսակցութիւնները ոչինչ հետևանք չունեցան. նրանցից մի քանիսը ասում էին, որ գիւղացիք լսելով քաղաքացոց հարկաւորութիւնը և նրանց դումարով ցորեան գնելու դիտաւորութիւնը, կարող են թանգացնել նրա արժողութիւնը, մի քանիսն ես ասում էին, որ հարկաւոր է ալիւր չինել ցորեանը և ապա բաժանել, ապա թէ ոչ ցորեանը հարկաւոր չէ լինելու նրանց և այլն....

Կային և այնպիսիներ, որոնք առաջարկում էին 1000 ռ. եթէ միայն N. աղան 500 ռ. տար, ճիշտ այնպէս ինչպէս անցեալ տարի արին ուսումնարանի նուիրատուութեան ժամանակ, այն զանազանութեամբ, որ այն միջոցին տուած փողերը ամբողջապէս դառնալու էին ուսումնարանի սեփականութիւն, իսկ այժմս նրանք միայն երկուերեք ամսվայ իրանց փողի տոկոսիքը պէտք է նուիրեն հասարակաց թշուառութեանը օգնելու։

—Դիֆտերիտի տարածվելը, նրա արած կոտորածները սարսափ են բերում։ Իւրաքանչիւր ոք զարհուրանքով մտածում է, որ այդ անկոչ հիւրը մի օր կարող է բաղխել և նրա դուռը։ Այդ պատճառով մենք չնորհակալ պէտք է լինենք այն անձանց, որոնք կամ իբրև մասնագէտ բժիշկ, կամ իբրև փորձառու անձն միջոցներ են ցոյց տալիս, եթէ ոչ հիւանդացածներին առողջացնելու, գոնէ առողջներին վարակվելուց պաշտպանելու համար։ Վերջիններիս թիւն պատկանում է և պ. Վասիլիէվ—ռուս շարաթաթերթի մինի թղթակիցը։ Պարոնը պատմում է, որ նա 1878 թուի ամառը անց է կացրել Պոլտաւեան նահանգի Կէէշչէնիցա գիւղում։ Նա ասում է, որ դիֆտերիտը սաստիկ տարածված էր այդ միջոցին թէ Կէէշչէնիցա և թէ նրա շրջակայ գիւղերում։ Պ. Վասիլիեվի ամուսինը իր մանուկներին պահպանելու համար վեր էր առել դիֆտերիտի դէմ փորձված մի դեղ—Mercurius Cianatus (ціанистый меркурій), այդ դեղի միջոցով նա ոչ միայն իր մանուկներին աղատ պահեց այդ սարսափելի ախտից, այլ ուրիշ շատերին ես աղատեց մահից։

Մի և նոյն տիկինը ներկայ 1879 թուի ամառը ես անց է կացրել վերոյիշեալ գիւղում, և նոյնպէս օգնել է հիւանդացածներին և նրանցից շատերին աղատել, այն ինչ 1879 թուում, այդ գիւղում բոլոր հիւանդացածները մեռնում էին։

Mercurius Cianatus տրվում էր ներքին ընդունելութեան համար, սկզբից մի գդալ ջրի մէջ երկերկու կաթիլ, իւրաքանչիւր կէս ժամին մի անգամ, երբ որ հիւանդութիւնը թեթևանում էր, ընդունելութիւնն ես ուշ ուշ էր լինում, այսինքն տալիս էին մի ժամը, երկու ժամը մի անգամ լոկ երրորդ օրը բաւական էր տալ օրը երեք անգամ երկու կաթիլ և այդպէս շարունակվում էր էլի մի երկու երեք օր։ Դեղի ներգործութիւնը և հիւանդութեան թեթևանալը ճանաչվում էր հետևեալ նշաններով։ Հիւանդ երեխան այլ ևս այնքան չէր դժուարանում կուլ տալիս, բկի ցաւը քչանում էր, տաքութիւնը նուազանում և քրտինք էր յայտնվում, այդ պատճառով արգելում էին ծնողներին դուրս թողնել շուտով երեխաներին տանից, մանաւանդ խոնաւ եղանակների միջոցին, Mercurius Cianatus ստացվում էր Ս. Պետերբուրգից, հետևեալ դեղարանից «С. Петербургская центральная гомеопатическая аптека на Гороховой, близъ краснаго моста, домъ № 15։» Դիֆտերիտով հիւանդացածների բնակարանների օդը մաքրելու համար տիկ. Վասիլիեվա գործ էր դնում kali hypermanganicum-ի մի թեթև խառնուրդ։ Վերոյիշեալ դեղի բիւրեղներից (кристалы) լուծում էր մի բաժակ ջրի մէջ և այդ խառնուրդից վեր էր առնում մի սեղանի գդալ մի չիչ ջրի մէջ խառնում և հրամայում էր սրսկել հիւանդի սենեակը։

Շնորհակալութիւն բժիշկ Բ. Նաւասարդեանցին, որ այդ հիւանդութեան մասին մի յօդուած տպեց «Մշակի» մէջ

* * *

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Երևան, 27 Նոյեմբերի

«Մշակ» պատուական օրագրում Նոր-Բարեկամի թղթակցութեան մէջ և յետոյ միւս մի համարում յառաջաւոր յօդուածի մէջ, ես գտայ անճշտութիւններ, որ պարտք եմ համարում ցոյց տալ։

Նոր-Բարեկամը իր նամակի մէջ ասում է, որ Զալաղեանի խումբը յարութիւն է առնում, թէ այդ Զալաղեանը ես եմ։ Երևանում ոչ մի ժամանակ թատրոնական խումբ չեմ կազմել կուսակցական ուղղութեամբ, այլ միշտ ուժերի միութիւն եմ ցանկացել։ Եթէ Երևանը անցեալ տարի մի քանի յաջող ներկայացումներ ունեցաւ, պատիւը պէտք է վերաբերել եռանդով լի և թատրոնասէր պ. բժիշկ Բագրատ Նաւասարդեանցին։ Նա մտածեց ներկայացումներ տալ, նա յառաջ տարաւ այդ գործը և մեծ յաջողութեամբ։

Գալով այս տարվան սպասելի ներկայացումներին, պէտք է ասեմ, որ հոգևոր ուսումնարանի ուսուցչաց ընկերութիւնը այնքան ուժ ունի, որ կողմնակի մարդկանց օգնութեանը և որ և իցէ անձի անունով իրան զարդարելու կարօտութիւն չունի։ Ես միայն «Խաթաբալա» պիեսայի մէջ մի դեր եմ վեր առել և դրանով վերջանում է իմ մասնակցութիւնը թատրոնական գործի մէջ Երևանում։ Անուն տալը չէ արդելված ոչ ոքի, բայց պէտք է յարմարութիւնով ընտրել։

Երևանում մի բեմ կայ Ս. Գայիանեան ուսումնարանի դահլիճում և այն հայր Մելեանցը կառուցել է ուսումնարանի համար արդիւնք ստանալու մտօք. թէ ինչ մշտական խումբ կարող է տեղի ունենալ Երևանում և որ բեմի վրա, անկախ որ և իցէ ուսումնարանից, այդ թողնում եմ մշակել յաջաջաւոր յօդուած գրողին։ Բաւական է մեզ երազել. կեանքը երազ չէ։

Կարապետ Զալաղեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են. «Մեր գաւառի մէջ գտնված սուրբ Փրկչի եկեղեցապատկան գիւղերի կառավարութիւնը յանձնված է գործակալ Խորէն աւագ քահանայ Բարսղեանին։»

—

Մեզ հաղորդում են ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ. «Լսում ենք, որ մեր քաղաքով պէտք է անցնի Թիֆլիսից դէպի Ղարս, Արդահան և Բաթում տանող տրամվայի ճանապարհը։ Այդ ճանապարհը Ալէքսանդրապօլից չի անցնի։»

—

Ուրբաթ, դեկտեմբերի 28-ին ռուս սիրողները Արծրունու թատրոնում կը ներկայացնեն. «Не въ свои сани не садись» Օստրովսկու կոմեդիան և «Всѣ мы жаждемъ любви», օպերետի երրորդ գործողութիւնը։ Տոմսակները Արծրունու թատրոնի կասսայումն են ծախվում։ Տեղերի գները սովորական են։

—

«Մշակի» առանձին համարները 5 կօպէկով հատը ծախվում են ԹԻՖԼԻՍՈՒՄ հետևեալ տեղերում. «Կարդանախի» մագազինում (Արծրունու տանը, Դվորցովի փողոցի վրա, պ. Նազարբէգովի մօտ), «Կովկաս» հիւրանոցի տակ (պ. Դէմիրեանցի ծխախոտի խանութում), Զաքարիա Գրիգորեանի գրավաճառանոցում (Միխայլեան կամուրջի մօտ) և դերձակ Դեկարխանեանի մօտ, Բէալական դպրոցի դիմացը։

—

Մեզ գրում են ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ. «Այստեղ մի ընկերութիւն կազմվեցաւ, որի նպատակն է արմատախիլ անել մի չռայլ սովորութիւն, այն է տօնախմբութեան ժամանակ խորտիկների թանգագին սեղան պատրաստել, որ միջին թւով արժեցնում է 50—100 ռ.։ Այս տարի պ. Մ. Պ. այդ հայկական զեղխ սովորութեանը վերջ տուեց և ռուսական 250 ռուբլիանոց կարկանդակ (пирогъ) պատրաստել տուեց։ Հիւրերը առաւօտեան 10 ժամից մինչև երեկոյեան 10 ժ. կերան, խմեցին և կանկան պարեցին։ Լաւ նորաձևութիւն է։»

—

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Ցեղական կլուբի դիրեկտորներից մէկը սովորութիւն ունի մարդկերանց փողոցային կերպով յիշոցներ տալ և ծեծվել։ Անցեալ տարի նա մի պատուաւոր մարդու պարելու ժամանակ «մեծ-քիթ» էր ասել, իսկ այս տարի բազմութեան առաջ ծեծեց մի պատուաւոր մարդու։ Այդ գեղեցիկ գործերի համար կլուբի անդամները ձայների բազմութեամբ նրան կլուբի դիրեկտոր ընտրեցին։»

(*) Այս խօսքը ասել է մի պատուաւոր մարդ քաղաքական պուլվարի մէջ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

—

Վերջին ժամանակներս թէ լրագրութիւնը և թէ հասարակութիւնը տաք-տաք վիճաբանութիւններ են անում կաբինէտի հրաժարականի մասին: Ամենքը մի առանձին համակրութեամբ են վերաբերվում դէպի պ. Ֆրէյսինէ, բայց և շատերն էլ չեն կարողանում առանց ցաւելու չը վերաբերվել դէպի պ. պ. Վադդինգտոնի և Լէօն-Սէի հրաժարականին: Նոր կազմվող մինիստրութեան նախագահութիւնը կը ստանայ պ. Ֆրէյսինէ. սա մի հաստատ լուր է. ասում են, որ պ. Կոնստան, որ մեծ հանճարի և ազնուութեան տէր մարդ է, ներքին գործերի մինիստր կը նշանակվի, որի մասին գոնէ դեռ այժմ ոչինչ վճռապէս չէ կարելի ասել. զանազան-դիպլոմատիական շրջաններում լուր է տարածված, որ իբր եթէ պ. Վիլսոն հրաժարվի մինիստրութեան առաջարկութենից, այն ժամանակ Լէոն-Սէ կը պահպանէ իր պորտֆէյլը: Իսկ ինչ կը վերաբերի պ. Վադդինգտոնի մասին, ինչպէս միջազգային հեռագիրն էլ մեզ հաղորդեց, բաւականին հաստատ ենթադրութիւններ կան, որ նա անպատճառ կը մնայ իր պաշտօնի մէջ:

Եթէ այս բոլոր լուրերն ուղիղ են, և եթէ նոր ընտրված մինիստրների հետ կը մնան և պ. պ. Վադդինգտոն և Լէոն-Սէ, այն ժամանակ դա կը լինի հանրապետական մի կատարեալ միութիւն, հետևապէս և մի այդպիսի մինիստրութիւն մեծ շանսեր կունենայ յարատև լինելու:

Դալով ժողովրդական աշխատութիւնների պաշտօնին, լուր կայ, որ իբր այդ պաշտօնն էլ կամենում են յանձնել պ. Վարրուին, որի մասին լրագիրները մեծ գովասանքով են վերաբերվում, և որի մասին ամենքն էլ արդարացի կերպով կարծում են, որ հիանալի ընտրութիւն է. բայց մի լրագրի թղթակից, որ անձնապէս մօտ ծանօթ է պ. Վարրուին, յայտնում է, որ նա երբէք մտադիր չէ պետական որ և է պաշտօն յանձն առնել: Իսկ պատերազմական մինիստրի պաշտօնի մասին դեռ ոչ ոք չը կայ ի նկատի, բայց շուտով ազգային ժողովում մէկն էլ դրա համար լոյս կընկնի:

Պատգամաւորների ժողովում Ժերօնդի պատգամաւոր պ. Բէնալ մի շատ հետաքրքիր զեկուցում տուեց. նա յայտնեց, որ Բորդօ քաղաքում տեղի ունեցած մի բանկէտի մէջ տեղային ցամաքային բանակի բարձրաստիճան օֆիցէրները կոմս Շամբօրի անունով մի ադրէս են կազմել, որի մէջ կոմսին գահի հրաւիրելու մի տեսակ ակնարկութիւն է երևում, և որը վերջանում է. «Կեցցէ՛ Թագաւորը» խօսքերով: Այդ օֆիցէրներից մեծ մասը հրաժարեցրած են պաշտօնից. բայց օֆիցէրների մէջ կար նոյնպէս և Կարէյօն-Լատուր անունով մէկը, որը բացարձակապէս յայտնել էր, որ նրա կարծիքով, նա Ֆրանսիայի ազատութիւնը միայն աւանդական միապետութեան մէջ է տեսնում: Այս յայտարարութենից յետոյ, պ. Բէնալ ժողովին բողոքեց որ նա ևս միւսների նման զրկվի իր պաշտօնից, և մի և նոյն ժամանակ շատ իրաւացի կերպով նկատեց, որ մասնաւոր մարդու մէջ այդ կարծիքի դէմ ոչինչ չունի նա, բայց այդպիսի կարծիք մի օֆիցէրի մէջ, որ հրամայում է հանրապետական բանակին, դա անները չելի է:

Սրանից յետոյ պ. Բէնալ աւելացրեց, թէ նրան շատ լաւ յայտնի է, որ այս ցուցմունքի առիթով հետախուզական մ. խորհրդարան է կայացել, որը մի առանձին ուշադրութիւն չը դարձրեց պ. Կարէյօնի հանաքի վրա, որով և նա մնաց իր պաշտօնի մէջ. բայց արդարութեան մինիստրը փոքր ինչ պէտք է հետաքրքրվէր այդ հետախուզական խորհրդարանի հետևանքով. միթէ նրան յայտնի չէր թէ ինչ կարող էր լինել մի խորհրդարանի գործունէութեան հետևանքը, որի անդամներն ընտրված են նոյն իսկ ներկայ դատաստանական պաշտօնակատարներից: Եւ բացի այդ ինչո՞ւ դիմել մի հետախուզական խորհրդարանի. պ. Բէնալի կարծիքով, այս դէպքում մինիստրն ուղղակի պիտի գործէր, և իսկոյն պէտք է հրաժարեցնէր նրան պաշտօնից. իսկ այսպէս կողմնակի ճանապարհներով մարդս միշտ հեռանում է որոշեալ նպատակից: Միթէ մինիստրին յայտնի չէ, որ բոլոր դատաստանական վարչութիւնները դաւաճանում են հանրապետութեանը. միթէ նա չէ իմանում, որ այն օրից, երբ հանրապետութեան սահմանադրական օրէնքներն արդարադատութեան բաղկացութեան մէջ վերանորոգութիւններ պահանջեցին, այն ժամանակից այդ բաղկացութիւնն իրան հանրապետութեան դէմ երդուեալ թշնամի հրատարակեց: Այս բոլորը պէտք է, որ շատ լաւ յայտնի լինէր պատուելի մինիստրին: Դեռ անցեալ տարի մի այդպիսի խորհրդարան էլ դատապարտեց գնդապետ Մադրանին, որը նոյնպէս բօնապարտեան ցուցմունքներ էր արել, բայց մինիստրն այդ հետախուզութիւնն անգործադրելի թողեց: Պ. Կարէյօն-Լատուրի վերաբերութեամբ էլ մինիստրը մի և նոյն կերպ վարվեցաւ, միայն այժմ փոքր ինչ կողմնակի ճանապարհով, որովհետև այժմ փոխանակ հետախուզական խորհրդարանի վճիռն անգործադրելի թողնելու, նոյն իսկ խորհրդարանը նրա ձեռքին գործիք դարձաւ: Պէտք է որ կառավարութիւնը ազդու միջոցներ գործ դնի յարգել տալու այն օրէնքները, որը երկիրն ընդունել է:

Պ. Բէնալ առանձնապէս շեշտելով հետևեալ խօսքերն ասաց: «Ես միանգամ ևս կրկնում եմ, պէտք որ թշնամին հեռանայ ասպարէզից: Ցամաքային բանակը, առաւել ևս վարչութիւնը երբէք չը պէտք է մնան հանրապետութեան թշնամիների ձեռքին:»

Պատերազմական մինիստր պ. Գրէվլէ, որ պ. Բէնալի այս խօսքերն ասած ժամանակ ներկայ էր պատգամաւորների ժողովին, իսկոյն բարձրացաւ ամբիոնը և ասաց, որ նա վարվել է այնպէս, որ ինչպէս հետախուզական խորհրդարանը վճռել է, և այդ բաւական է. իսկ ինչ կը վերաբերի փոփոխութիւններ անելուն խորհրդարանի վճռի մէջ, նա ասաց, որ նա այդ երբէք չի անի. և այդ խօսքերն ասելուց յետոյ, նա իսկոյն իջաւ ամբիոնից, կռան տակը դրեց պօրտֆէյլը և մի առանձին քայլերով դուրս գնաց դահլիճից:

Սրանով նա յատնեց իր յանկարծական հրաժարականը: Աջակողմեանները խուռն բազմութեամբ ծափահարեցին. դահլիճի մէջ մի քանի րոպէ քրթմնջում ու աղմուկներ բարձրացրին:

Պ. Դամբէտտա կարգի հրաւիրեց ներկայացուցիչներին և խնդրեց, որ շարունակեն վիճաբանութիւնները: Այդ միջոցին պ. Բրիսսօն ցոյց տալով պատերազմական մինիստրի դատարկ տեղն ասաց: «Ո՞ւմ առաջ պէտք է շարունակենք վիճաբանութիւնները, երբ մինիստրը բացակայ է:»

ԹԻՒՐՔԻԱ

—

Բէլգիական «Nord» լրագիրը տպել է հետևեալ հեռագիրը Կ. Պոլսից, դեկտեմբերի 23-ից: «Պատասխանելով մահմետական նոր տարվայ առիթով մինիստրների և բարձր պաշտօնեաների կողմից մատուցված շնորհաւորութիւններին, Սուլթանը ասեց որ ամեն ջանք կանի իր երկրի բարօրութիւնը և նրա ունեցած հեղինակութիւնը ապահովացնելու համար, ջանք կանի հաստատել հաւասարութիւն և արդարութիւն հպատակների մէջ և նպաստել առաջադիմութեանը համեմատ դարի պահանջման:»

Այդ տեսակ խօսքեր շատ անգամ ենք լսել սուլթաններից. դրանք հանդիսաւոր օրերին ասելու խօսքեր են, բայց դրանց իրագործելու համար աւելի է հարկաւոր քան թէ լոկ խոստումներ: Հարկաւոր են ընդունակ պետական գլուխներ, որ դժբաղդաբար Թիւրքիան չունի, հարկաւոր է ֆինանսական և տնտեսական աւելի լաւ դրութեան մէջ լինել, քան թէ այն դրութիւնը, որի մէջ գտնվում է այժմ ողորմելի Թիւրքիան:

Հնացած միջոցներով չէ կարելի ժամանակակից պահանջման համեմատ առաջադիմութիւն մտցնել մի երկրի մէջ, այն էլ այնպիսի մի երկրում, որտեղ ինքն ամբոխը կարօտ է դեռ ժողովրդական ուսման և որ փրոտում է տգիտութեան, խաւարի ու մոլեռանդութեան մէջ:

Թող գոնէ Թիւրքիայի հայերը չը յափրշտակվեն նորին մահմետական մեծութեան այդ դարդակ ֆրազներով և չը հաւատալով Օսմանեան պետութեան ընդհանուր վերանորոգութեանը, որ երազական է և կը մնայ, շարունակեն հաստատամտութեամբ պահանջել իրանց հայրենիքի ինքնավարութիւնը:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻ

—

Կ. Պոլիս, 8 դեկտ.

Աղմկալից ժամանակաց կը յաջորդեն ստէպ շատ անչչուկ ժամանակներ: Կ. Պոլիս էլ այժմ կը վայելէ մէկ քիչ խաղաղութիւն: Նաւատորմիղի սպառնանք, և նմանօրինակ բաներ այլ ևս չեն տեսնուիր, չեն լսուիր: Լռութեան մէջ սակայն ամեն ոք կաշխատի դարձեալ: Թիւրքերը դադրած չեն այս կամ այն տէրութեան հետ դաշինք կնքելու փորձ փորձել. հայերն մոռցած չեն Հայաստանի խնդիրը: Վերջին թուղթովս կը հաղորդէի այդ տեղի մեր հայրենակիցներուն թէ Անգղիոյ դեսպանին և պ. Տրոտտերին միջև կատարուեր է մի կարևոր թղթակցութիւն Հայաստանի վարչութեան մասին, բայց Պատրիարքն ալ միւս կողմէ դեսպանաց մօտ իր դերը կը կատարէր: Բնական է թէ թիւրքերը չը պիտի գովեր, երբ անգղիացիք իսկ վերջապէս սկսան բերան և մեթոտ փոխել: Պարբոսը, Սաիտ բաշա, դժգոհ սրտով մի օր ըսեր է հայազգի երեւելի բժշկի մը «ոհ, ինչ է վերջապէս Ներսէսին ուզածն, մի անգամ հասկընայինք», բժիշկը շատ լաւ կըսէ և կը թռչի կերթայ Պատրիարքին մօտ «միթէ, կըսէ սա էլ, Սաիտ բաշան դեռ չէ հասկըցած ինչ կուզեմ» Այս ամենափաղաքչական քաղաքավարութիւններէն յետոյ, Հայաստանի խնդիրը կը լինի վերստին խնդիր և տեղացի ֆրանսիական մի թերթ ալ կը սկսի գովել Բ. Դուքն որ վերջապէս հասկըցեր թէ Ներսէսի պէս մի մարդու հետ հարկաւոր է նախ և յառաջ համաձայնիլ Հայաստանի վերանորոգութեան միջոցներու մասին և յետոյ զանոնք գործադրել: Գիտէք որ Մահմուտ-Նեդիմ-բաշա ներքին գործոց պաշտօնեայ է: Երևի, սա այս վերջի օրերս ըսեր է թէ հայոց հարցը պիտի դրուի վիճաբանութեան մէջ ճլիսի խասի մէջ (մինիսթրների ժողով) կարելի է իր նախաձեռնութեան (initiative) շնորհիւ, որովհետև Սաիտ-բաշա, այն կարգի խելապատակներէն է, որ կը կարծեն թէ տակաւին ճար կայ քրիստոնեայները կլլել և Թիւրքիոյ երեսը զարդարել իսլամի ապարօշներով (սարըգ turban): Ցոյս մը որ Մահմուտ-Նեդիմ չունի, և ընդհակառակն, համոզմամբ կը հաւատայ թէ զատելու է քրիստոնեայներն իսլամներէն, անոնց տալ առանձին երկիր և ազատութիւններ և այսպիսի բարեկամական քաղաքականութեամբ բարեկամ պահել զանոնք միշտ Թիւրքիոյ: Վասն այն տեղ է որ Սաիտ-բաշա, Նեդիմէն աւելի ազդեցութիւն ունի Սուլթանին առջև որ մի մեծ դժբախտութեամբ էլ շատ չը սիրեր հայերը, կան թէև չարաճճիներ որք Համիտի բարեկամութեան և թշնամութեան այնչափ յարգ պէտք է տալ կըսեն, որչափ չղթայակապ Նաբուդոդոնոսորի մը:

Վաղուց հարկ կը զգացուէր այս տեղ մի ֆրանսիական լեզուով թերթ հրատարակել պաշտպանելու համար հայկական շահերը: Վաճառականներ կաշխատեն այդպիսի մի մեծ ձեռնարկի ապագայն ապահովել, և մոռանալով նաև թէ թիւրքերն ալ հայոց հաշտեցնելու գործն ոչ նուազ կարևոր է, նոյն այդ վաճառականք պիտի հրատարակել տան նաև թիւրքերէն լեզուաւ և թիւրքերէն տառերով մի օրագիր. այս բաւական չէ, գաւառացի հայերն ալ առաջնորդելու համար որոշեր են գաւառական բարբառներով մի թերթ հաստատել: Այս երեք գործը կը պահանջէ 30,000 մանէթ:— Հայոց համար մի որոշ կենտրոն մը ըստեղծելու համար, այժմ նոյն այդ բարեսէր և ազգասէր անձերը բաժանորդագրութեամբ կը պատրաստուին մի Հայկական ակումբ և սորա համար մի ընդարձակ չէնք հաստատել: Ձեր կովկասու գլուխներու նման բան չը կարծէք, ուր, «Մշակէն» կիմանանք, թէ ուրիշ բան չեն ըներ, բայց եթէ թուղթ խաղալ, մին միւսը կողոպտել և ադոր նման քաջագործութիւններ: Հայկական ակումբին մէջ, պիտի վիճուին և քննուին ազգային կենսական ամեն խնդիրներն և պիտի լինի, մէկ խօսքով, Պատրիարքարանի ամենամեծ օգնականն և.... շարունակութիւնը:—Այս էլ քաւական չէ, ազգն քիչ ժամանակէն պիտի ունենայ մի համալսարան, այսինքն, մի գրեթէ համալսարան, որովհետև հայերն ալ մի գրեթէ ազգ մ'են, ուր ձրիաբար պիտի դասախօսեն ամենամեծ գիտնականները:—Ուրիշ ձեռնարկ մ'ալ, Բերայի գերեզմանատան հողին վրա մի հիւանդանոց, մի անկելանոց և մի որբանոց պիտի շինուին, իսկ գերեզմանատան եզերքն ալ խանութներ և տուներ, ու մէջ տեղն էլ մի բարձրադոյն ուսումնարան: Այս գերեզմանատունը մի մեծ սեպհականութիւն է, որի գինը օր օրի աւելի կը բարձրանայ, որովհետև կը գտնուի Բերայի մէջ և մի ամենագեղեցիկ տեղ մը: Ցերութիւն երբեմն յափշտակել ուզեց, իսկ մշեցի և վանցի ախպարներն հասկըցուցին որ իրենք շատ յօժարութիւն չունեն զայն յափշտակել տալու և տէրութիւնն էլ այդ բացատրութենէն գոհ համարեց ինքզինքը: Այդ գերեզմանոցին մէջ չէնք չինելու արտօնութիւն կը մերժէր տալ մինչև այսօր, այժմ այդ հրամանն ալ առնուեցաւ:

Ահա շարք մը մեծամեծ գործեր ապառնի, այո, ոչ ներկայ, բայց ձեր կովկասու ազգասէրները, կուզէինք որ, քիչ մը գլուխնին ցցունէին և ոչ թէ լոկ քննադատութիւններ ընէին:—Այստեղ հաշիւ թէ հայ ժողովուրդն անօթի չը մեռնիր, հաշիւ թէ կապրի, և հակառակ այս վիճակին, նա տալիս է, տալիս է. շարունակ: Վերջերս մի վիճակագրութիւն եղաւ Կ. Պոլսոյ ընկերութեանց և տեսնուեցաւ թէ 13 ընկերութիւն կայ, որոց համար ամէն ամիս տալիս է աւելի քան 3000 մանէթ, չենք հաշուեր տարւոյ մէջ պատահած մեծ հանդէսները, ինչպէս «Արարատեան» հանդէսն, որ ամառը տրրվեցաւ, նոյն հայ ժողովուրդը տուաւ մօտ 8000 մանէթ զուտ հասոյթ: Պ. Ոսկանի, մի աղքատ երիտասարդ հայ քանդակագործի արձանաց համար հաւաքուեցաւ մօտ 4000 մանէթ, կրակէ վնասուած պ. Զուհաճեանի նուագահանդիսին 2000 մանէթ և այժմ էլ Դպրոցասիրաց-Արևելեանը կը պատրաստուի տալ մի պարահանդէս որ անտարակոյս պիտի բերէ 10.000 մանէթ: Երևի, անգղիական դեսպանն, ինչպէս անցեալ տարի, այս տարի էլ ուզեր է որ իր պաշտպանութեան տակ մի պարահանդէս տրուի յոգուտ անոր դպրոցներուն, որովհետև իր ասիական հիւպատոսներէն մին, պ. Իվրրթ, այցելեր է Ալաշկերտ, տեսեր է ընկերութեան դպրոցը և տեղակագրեր է դեսպանին ուշադրութիւն հրաւիրելով ընկերութեան վրա:

Ընկերութիւն ուրախ է որ մի եւրոպական դեսպան իրեն պաշտպան կը հանդիսանայ, և այսպիսի մի հովանաւորութեան գին ու արժէքը մենք էլ կը հասկընանք, վասն զի այդ չնորհիւ մի շատ կառավարական դժուարութիւններէ ազատ կը մընայ:—Երեք ընկերութեանց միացումը դեռ չը կատարուեցաւ, երևի, Դպրոցասիրաց-Արևելեանը ամեն ճիգ կընէ որ այդ միութիւնը տեղի ունենայ և միացեալ ընկերութեան անունով պարահանդէսը տրուի: Տեսնենք թէ միւս ընկերութիւնք այնքան պիտի փութան միանալու: Աղէկ միտքս եկաւ, լսեցի թէ այդ ընկերութիւնը կուզէ Ռուսաստանցի ծանօթ մի մանկավարժի հետ դաշնագրել և զինքն Հայաստան զրկել—կայ արդեօք ձեր մէջ էլ այնքան ազգասէր դաստատուներ որ յանձն առնուն այդպիսի մի պաշտոն—իմ կանխաւ չնորհաւորութիւնքս այն մանկավարժին որ ընկերութեան առաջարկը չը պիտի սերժէ:

Դպրոցասիրաց-Արևելեանի պատուիրակն եկաւ Կովկաս պտրտել. չենք գիտեր յաջողեցաւ թէ չէ, բայց կարդացինք թէ այլ և այլ քաղաքներու մէջ մասնաժողովներ հաստատեր է: Արդեօք այդ մասնաժողովները կեանքի նշան մը տուին—«Մշակի» և «Մեղուի» մէջ ոչ մի բան չը տեսնուեցաւ: Երևի շատ պլատոնական խոստումներով զինքը ետ դարձուցեր է: Այդ էլ մի մեթոտ է ազդասիրութիւն ընելու:

***

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1880 г. БИБЛІОГРАФИЧЕСКОЕ ИЗВѢСТІЕ. 1880 г.

Приступлено къ капитальному. роскошно-иллюстрированному изданію—въ родѣ парижскаго великолѣпнаго художественно-литературнаго произведенія "Diable de Paris" (*), только съ другими болѣе широкими задачами—

ПОДЪ НАЗВАНІЕМЪ:

ИЛЛЮСТИРОВАННЫЙ

БѢСЪ

ИНКОГНИТО СТРАНСТВУЮЩІЙ ПО ВСѢМЪ ЗАКОУЛКАМЪ РОССІИ

ПРОЗА, СТИХИ, РИСУНКИ ЛУЧШИХЪ РУССКИХЪ ПИСАТЕЛЕЙ И ХУДОЖНИКОВЪ.

Разсказы, очерки сцены, приключ., шутки, анекдоты, картинки, портреты и наблюденія

Выдержки изъ программы изданія: Современные нравы, обычаи, предразсудки, привычки, склонности, недостатки, глупости, дурачества, сплетни, обманы, плутни. мошенничества, воровства, разгулъ ловеласничество, развратъ, тунеядство, подхалюзничество, распущенность, кутежи, попойки, взяточничество, продѣлки, кулачество, чревоугодія, нищенство, растовщичества, пошлости, наслажденія. безобразія и разныя удали, замашки и молодечества, свойственныя широкимъ, бойкимъ и смѣлымъ натурамъ.

Серьезное, смѣшное, забавное, веселое, печальное и поучительное.

Издается и иллюстрируется Петербурскими и Московскими литературами и художниками.

НѢСКОЛЬКО СЛОВЪ ЧИТАЮЩЕЙ ПУБЛИКѢ:

Цѣль нашего стремленія та, чтобы подарить русскую публику такимъ художественно-литературнымъ произведеніемъ, какого на русскомъ языкѣ не было еще издано. Чтобы привѣсти въ исполненіе свою мысль мы пригласили къ соучастію въ своемъ предпріятіи извѣстныя, талантливыя литературныя и художественныя силы (**), и потому самоувѣренно заявляемъ, что „Иллюстрированный Бѣсъ", въ средѣ лучшихъ художественныхъ изданій будетъ **самобытнымъ, оригинальнымъ. любопитнымъ и интереснымъ** явленіемъ не только для образованныхъ столичныхъ и провиціальныхъ жителей, но и вообще для всѣхъ грамотныхъ людей.

Рамка нашего объявленія лишаетъ насъ возможности выразить во всей широтѣ и полнотѣ программу своего изданія,—но пологаемъ что помѣщенный выше перечень наименованій, достаточно знакомилъ съ идеей и содержаніемъ „Иллюстрированнаго Бѣса". Знакомство публики съ общественными недугами и язвами, кромѣ существенной пользи, вреда принести никому не можетъ: Если бы русская литература пораньше и почаще знакомила съ тиной публичной и семейной жизни, то вѣроятно мы не были бы свидѣтелями многихъ печальныхъ явленій, которыя переживаемъ. Незнаніе разношерстной и шершавой толпы выражается въ томъ, что мы очень неразборчивы относительно знакомства и крайне снисходительны къ лицамъ заклейменнымъ общественнымъ презрѣніемъ. Если бы общество изгнало изъ среды своей запятненныя личности, преслѣдовало и казнило безчестные поступки—общественная нравственность была бы гораздо выше и поступки, нерѣдко встрѣчающіеся теперь на тѣхъ ступеняхъ общества, гдѣ ихъ нельзя бы и предполагать,—были бы тогда невозможны. Къ сожалѣнію наше общество часто преслѣдуетъ слабыхъ и менѣе виновныхъ, и склоняется передъ порокомъ или безсовѣстностью богача.

Мы своемъ изданіи цѣлымъ рядомъ живыхъ, смелыхъ, правдивыхъ и яркихъ картинъ изобразимъ современную жизнь не въ подобранныя, такъ сказать, ея минуты, не въ чертахъ глубоко скрытыхъ на днѣ ея, а какъ она мечется въ глаза сама собой. Типитескія стороны быта цѣлыхъ сословій и отдѣльныхъ личностей, общечеловѣческія странности и недостатки, изнанка и лицевая сторана нашей жизни,—будутъ обнаружены меткимъ перомъ и карандашемъ нашихъ сотрудниковъ. Настоящая жизнь, переполненная кутежами и обманами, уголовными преступленіями и проступками, вѣчно румяными камеліями, зазвонистыми песнями цыганъ, крупными банкротствами и т. д.,—представляетъ интересный и богатый матеріалъ для художника, литератора и публики.

Мы употребимъ всѣ силы и средства для того, чтобы нашъ „Иллюстрированный Бѣсъ", былъ Бѣсомъ во всѣхъ отношеніяхъ.

Полное изданіе „Иллюстрированнаго бѣса" составитъ огромный томъ отъ 70 до 80-ти въ 4-ю долю листовъ, форматомъ извѣстнаго журнала „Нива", отпечатанныхъ въ двѣ колонны, на сатинированной, спеціально сфабрикованной для нашего изданія, бумагѣ, новымъ красивымъ и характернымъ шрифтомъ.

Текстъ будетъ иллюстрированъ двумя стами картинъ: рисунковъ, видовъ, сценъ, типовъ, портретовъ и виньетокъ, рисованныхъ извѣстными художниками—жанристати и виполненныхъ на деревѣ лучшими граверами въ Россіи и за границей.—Обертка на полное изданіе роскошно будетъ отпечатана хромолитографіей.

Подписавшимся на „Иллюстрированный бѣсъ" до 1-го февраля 1880 года, будетъ выдана **большая олеографическая картина**, изображающая **„Маскарадъ съ знакомыеи лицами"**. Въ картинѣ будетъ сгрупированы „герои дня" въ самыхъ живописныхъ и пикантныхъ позахъ.

Цѣна за все изданіе 6 руб., съ пересылкой 7 руб.

„Иллюстрированный бѣсъ" будетъ печататься по наличному числу подписчиковъ. Оставшіися по какому либо случаю отъ подпискѣ екземпляры будуъ продаваться въ двое, т. е. по 14 руб. Все изданіе будетъ непремѣнно окончено къ концу 1880 года. Первая часть выйдетъ никакъ не позднѣе марта мѣсяца, а затѣмъ изданіе будегъ продолжаться безъ остановки и своевременно разсылаться.

Въ виду быстро идущей мѣстной подписки просимъ гг. иногородныхъ поспѣшить присылкой своихъ требованій.

Подписка принимается у всѣхъ извѣстныхъ книгопродавцевъ и въ отдѣленіи конторы редакціи, при **книжномъ и писчебумажномъ магазинѣ И. И. Смирнова**, на углу Моховой и Охотнаго ряда, въ д. Карзинкина, **въ Москвѣ.**

Гг. иногородныхъ просимъ обращаться съ требованіями **исключительно въ контору типографіи Императорскихъ** Московскихъ театровъ **И. И. Смирнова**. у Зоологическаго сада, въ собственномъ домѣ, **въ Москвѣ.**

*) Продаются по 30—40 к. с.

**)Имена всѣхъ принимающихъ участіе въ нашемъ изданіи будутъ напечатаны въ первомъ выпускѣ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

բոլոր եւրոպական լրագիրների համար Մոսկվայում (Центральная контора объявленій для всѣхъ европейскихъ газетъ въ Москвѣ, Большая Дмитровка, д. Бучумова) ԸՆԴՈՒՆՈՒՄ Է *յայտարարութիւններ* ԲՈԼՈՐ *ռուս և արտասահմանեան* ԼՐԱԳԻՐՆԵՐԻ *համար խմբագրական* ԳՆԵՐՈՎ, *նշանաւոր* ՁԻԶՈՒՄՆԵՐՈՎ:

Ռուսաց ամենօրեայ, շաբաթական, պատկերազարդ և ծաղրական լրագիրների ԳԼԽԱՒՈՐ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ: ԱՄԵՆՕՐԵԱՅ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ *ունի բոլոր ռուսաց և արտասահմանեան* ԼՐԱԳԻՐՆԵՐԻ *հետ: Յայտարարութիւններ ընդունվում են նոյնպէս բոլոր զաւառական լրագիրների համար: Թարգմանութիւնները* ՁՐԻ *են լինում: Իւրաքանչիւր յայտարարութեան համար* ԱՊԱՅՈՒՅԱԿԱՆ № *է ուղարկվում:*

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՆՎԱՐՁ ԵՆ ԿԱՋՄՎՈՒՄ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ *ընդունվում է բոլոր լրագիրների համար:*

10—15 (4)

ԱՌԱՋԻԿԱՅ 1880 ԹԻՈՒՄ ԿԸ ՏՊԱԳՐՎԻ

„ԿԱՅԾԵՐ"

ՎԷՊ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՑ

Հեղինակութիւն ՐԱՖՖԻ

Վէպը բաղկացած կը լինի երկու առանձին հատորներից, իւրաքանչիւրը կը բովանդակէ մօտաւորապէս 400 *տպագրված երեսներ: Ամեն մէկ հատորի գինն է* 1 *ր.* 50 *կ., իսկ միասին* 3 *ր.: Մէկ հատորի համար առանձին ստորագրութիւն չէ ընդունվում:*

Ստորագրվել կարելի է ԳԻՒՂՈՆԵՐՈՒՄ *այն պարոնների մօտ, որոնք բարեհաճել են բաժանորդներ հաւաքել «ԿԱՅԾԵՐԻ» տպագրութեան համար, իսկ* ԹԻՖԼԻՍՈՒՄ *պէտք է դիմել «Մշակի» խմբագրատանը* Յ. ՄԷԼԻՔ-ՅԱԿՈԲԵԱՆԻՆ:

ՓՈՐՁ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

1880 *թ.*

(*Չորրորդ տարի*)

Չորրորդ շրջանի մէջ և այս «ՓՈՐՁԸ» կը հրատարակուի մի և նոյն հոգւով և ուղղութեամբ և նոյն ծրագրի համեմատ ինչպէս և առաջին երեք տարիները:

Հանդէսը լոյս է տեսնում ամսէ ամիս:

Իւրաքանչիւր համարի տպագրական թերթերի թիւը լինելու է 12-*ից մինչև* 15. *Ամբողջ տարին կազմում է չորս մեծադիր հատոր, ամեն մէկը աւելի քան* 600-700 *երեսից բաղկացած:*

«ՓՈՐՁԻ» բաժանորդագինը ամենայն տեղ տասը ռուբլի է:

Հոդւորածները Կոնսիստորիայի միջնորդութեամբ, իսկ ուսումնարանները և ուսուցիչները թեմական վերատեսչի պատասխանատուութեամբ կարող են մաս առ մաս վճարել, այն է:

*Ստորագրելու ժամանակ—*4 *ռուբլի, մայիսի* 1-*ին* 3 *ռուբլի և սեպտեմբերի* 1-*ին* 3 *ռուբլի:*

Այն անձինք, որոնք միանուագ չեն կարող վճարել բաժանորդագինը դիմում են իւրեանց պայմաններով խմբագրին:

Ստորագրուել կարելի է Տֆիխսում՝ «ՓՈՐՁԻ» խմբագրատան մէջ և Կենտրոնական գրավաճառանոցում՝ Կ. Պոլսում՝ մեծ. Պետրոս էֆ. Վասիլեանի մօտ. Ղալաթիա Կէօղէ սողլու խան, մաքսատան դիմաց. Զմիւռնիայում՝ գեր. Մելքիսեդէկ եպիսկոպոս Մուրադեանի մօտ իսկ Ասիական Տաճկաստանում մեծ. Լ. Մուրադեանի մօտ, Սամսօն:

*18*76/77, *18*77/78 *և* 1879 *թ. «ՓՈՐՁԸ» կարելի է ստանալ խմբագրատան մէջ իւրաքանչիւր շրջանի համար* 10 *ռուբլի հատուցանելով:*

Նոր բաժանորդները առաջին փոստայով ստանում են բոլոր լոյս տեսած համարները:

*Օտար քաղաքացիք կարող են դիմել խմբագրին հետեւեալ հասցէով—*Тифлисъ. Въ Редакцію Армянскаго журнала „ПОРДЗЪ", *իսկ արտասահմանից—*Tiflis. Redaction du journal Arménien „PORDZ".

Խմբագիր-Հրատարակիչ ԱՐԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ԾԱԽՎՈՒՄ Է

Նոր *վրացական ձեռնարկ* Самоучитель Учебникъ Грузинскаго языка, сост. г-мъ Теръ-Габріелянцемъ:

Այդ ձեռնարկը պարունակում է ընդհանուր տեղեկութիւններ ու քերականական կանոններ վրաց լեզուի ամենագիւրին ոճով. բառերի և տառերի արտասանութիւնը գրված է քանի մի լեզուով՝ ռուսերէն, հայերէն, ֆրանսերէն, գերմաներէն և պարսկերէն. այնպէս որ այդ միջոցով և օտարազգին ինքն իրան կարող է հեշտութեամբ ուսանել վրաց լեզուն:

Արդէն երկրորդ հրատարակութիւնն է և յուսամք երրորդ տպագրութեամբ՝ ի լոյս ածել կարճ միջոցից յետ: Գինն է 50 *կոպ. Ծախվում է պ. Բերենշտամի, Զաքար Գրիգորեանի, Աւետիք Էնֆիաճեանի մօտ ու Գաբրիէլ Սալամբէգեանի խանութում:*

Մեր աշխատութիւնք են նոյնպէս. 1) *Ֆրանսիական լեզուի ձեռնարկ, վրաց լեզուի օգնութեամբ.* Livre de poche à lusage de la jeunesse armènienne et georgienne; 2) *Ինքնուսոյց ռուս լեզուի՝ վրաց լեզուի օգնութեամբ:* Самоучитель Русскаго языка при помощи Грузинскаго.

Գաբրիէլ Տէր-Գաբրիէլեանց:

2—4

Մամուլի տակ ընկաւ և շուտով լոյս կը տեսնի «Մանկական երգարան» անունով գրքոյկ, Հայր Եղնիկի աշխատասիրութեամբ, որոյ մէջ եղած երգերը ընդունուած են Տիֆխիսի Ներսիսեան և Ս. Գայիանեան օրիորդաց միջնակարգ ուսումնարաններումը. գրքի պահեստը կը գտանուի Զ. Գրիգորեանցի Կովկասեան Գրավաճառանոցում:

2—5

ՄԻ ՀԱՅ ՕՐԻՈՐԴ, *որ այս տարի* ԱՒԱՐՏԵԼ Է ՄՐՅԱՆԱԿՈՎ *իգական* ԳԻՄՆԱԶԻՈՆԸ, *ցանկանում է* ՈՒՍՈՒՑՉՈՒՀՈՒ *պաշտօն ստանալ (գլխաւորապէս ռուսաց լեզուից և մաթեմատիկայից) մի* ՀԱՅ ՕՐԻՈՐԴԱԿԱՆ ԴՊՐՈՅՈՒՄ: *Պայմանները խնդրում է ուղարկել* ԱՅՍ ՀԱՍՑԷՈՎ՝ (С. Петербургъ. въ армянскую церковь, священнику Хонтардянцу).

Կիրակի, դեկտեմբերի 30-*ին պ. Սեդրակ Մանդինեան կը կարդայ Արծրունու թատրոնում մի դասախօսութիւն «Հայաստանի ճանապարհորդութեան տպաւորութիւններ»: Տոմսակները վաղօրօք ստանալ ցանկացողները պէտք է առնեն Կենտրոնական գրավաճառանոցում, իսկ դեկտեմբերի* 30-*ին, դասախօսութեան կարդալու օրը, Արծրունու թատրոնի կասսայում: Տեղերի գները սովորականից էժան կը լինեն: Մանրամասները առանձին աֆիշայով կը յայտնվեն:*

Дозволено Цензурою 26 Декабря 1879 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона